

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻԵՐԱՐԽԻԿ ԱՎՏՈՍԱՏԱՑՎԱԾ ԴԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՍՏԱՏԻԿ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԶԵՎԱԿՈՐՍԱՆ ԵՎ  
ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

**Հ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ**

*Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր,  
Ինժորմատրկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ*

Որևէ կազմակերպության ավտոմատացված ինֆորմացիոն համակարգի (ԱԻՀ) ստեղծման և ներդրման կարևորագույն աշխատանքներից են նրա ելման (մեկնարկային) ինֆորմացիայի ծևակորման, դասակարգման և մուտքագրման հարցերի լուծումը:

Եթե ընտրված և տեղակայված են ԱԻՀ-ի տեխնիկական և համակարգային ծրագրային միջոցները, մշակված և կարգաբերված են կիրառական ծրագրային համալիրները, ապա ԱԻՀ-ի գործարկման համար անհրաժեշտ է ծևակումներ, ծևակորել, դասակարգել և համապատասխան բազաներում մուտքագրել տվյալ կազմակերպության քանակական, որակական և նորմատիվային բոլոր տվյալները՝ որպես ծրագրային ապահովման մուտքային տվյալներ։ Այդ տվյալներով բնորոշվում է կազմակերպության ինֆորմացիոն դեմքը, նրա կառուցվածքային, կազմակերպական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, հումքի, արտադրանքի, անձնակազմի քանակների ու տիպերի ստատիկ վիճակը։

Բավականաչափ մեծ ԱԻՀ-երի համար ելման ինֆորմացիայի ծավալը կարող է հասնել հարյուրավոր գիգաբայթերի։ Այդ ծավալի ինֆորմացիայի նախնական մշակումը և մուտքագրումը շատ աշխատատար և պատասխանատու գործընթաց է, որի ավտոմատացման տեխնոլոգիական և մեթոդական միջոցների մշակումը արդիական խնդիր է։

ԱԻՀ-ի ելման ինֆորմացիայի նախնական մշակումն ու մուտքագրումը իրականացվում է հետևյալ հիմնական փուլերով։

- ինֆորմացիոն օրյեկտների ցուցակի ստեղծում, նրանց համապատասխան տվյալների (աստրիբուտների) որոշում,
- տվյալների ծևայնացում (բերում համակարգչային մշակման համար ընդունված կառուցվածքների և ծևաչափերի),
- տվյալների դասակարգում ըստ ծևայնացման հայտանիշների և համապատասխան դասակարգիչների կառուցում,

- տվյալների մուտքագրում համապատասխան մասիվների և տվյալների բազաների մեջ:

Ելման ինֆորմացիայի ծևավորման և ավտոմատացված մուտքագրման խնդիրների լուծումը շատ դժվար է հատկապես տվյալների բաշխված բազաներ ունեցող տարածքային հիերարխիկ ԱԻՀ-երի համար, որոնց օբյեկտները կարող են լինել իրարից մեծ հեռավորությունների վրա գտնվող տեղային համակարգչային ցանցեր կամ առանձին-առանձին աշխատանքային կայաններ:

Այդպիսի համակարգերի կենսունակության և գործառության կայունության ապահովման նպատակով շատ դեպքերում կիրառվում է տվյալների բաշխված բազաների (ՏԲ) կազմակերպման սկզբունքը, երբ համակարգում մտցվում է կառավարելի ինֆորմացիոն հավելուրդ, այսինքն համակարգի յուրաքանչյուր օբյեկտի ՏԲ-ն բացի սեփական տվյալներից պարունակում է նաև բոլոր ենթակա օբյեկտների անբողջ ինֆորմացիան: ՏԲ-ների այդպիսի կազմակերպումը ապահովում է հիերխիայի նույն ճյուղի օբյեկտների ՏԲ-ների հիերարխիկ ներդրվածությունը ներքեւից վերև և կարող է նկարագրվել հետևյալ առնչությամբ.

$$DB_i = \sum_{j=1}^{k_i} DB_j + \Delta_i, \quad (1)$$

որտեղ՝  $DB_i$ ,  $DB_j$  -  $i$ -րդ օբյեկտի և նրա ենթակա օբյեկտների բազաներն են,

$\Delta_j$  -  $j$ -րդ օբյեկտի սեփական ինֆորմացիան է,

$k_i$  -  $i$ -րդ օբյեկտի ենթակա օբյեկտների քանակն է:

Նշված սկզբունքը պահանջներ է դնում ոչ միայն հիերխիայի նույն ճյուղին պատկանող օբյեկտների ինֆորմացիոն համապատասխանության ապահովման, այլև ելման ինֆորմացիայի նախնական մշակման ու մուտքագրման մեթոդների վրա:

Կարելի է նշել այդ գործընթացի իրականացման սկզբունքային երկու տարրերակ.

1. Յուրաքանչյուր օբյեկտ ինքնուրույն մուտքագրում է իր և ենթակա օբյեկտների ինֆորմացիան (1)` օգտվելով ինֆորմացիայի օբյեկտում առկա կրիչներից,
2. Ամբողջ համակարգի ինֆորմացիան ծևավորվում ու մուտքագրվում է կենտրոնացված ծևով համակարգի ամենավերին օբյեկտում և ենթակա յուրաքանչյուր օբյեկտի հասցեով ուղարկվում է նրան վերաբերվող ֆրագմենտը:

Պարզ է, որ առաջին տարբերակով մուտքագրման ժամանակ մեծ է սխալի և օբյեկտների ինֆորմացիոն անհամապատասխանության հավանականությունը: Չնայած դրան առաջին տարբերակը պետք է մատչելի լինի բոլոր օբյեկտներին՝ որոշ թույլատրելի շտկումներ, փոփոխություններ կատարելու համար:


Բնականաբար առավել նախընտրելի է կենտրոնացված մուտքագրման տարբերակը, որը կարող է ապահովել օբյեկտների լրիվ ինֆորմացիոն համապատասխանություն, ընդ որում, նույնիսկ բաց թողնված սխալը չի կարող բերել վատ հետևանքների, քանի որ այն, հայտնաբերվելուց հետո, կարող է ուղղվել կենտրոնացված մուտքագրման նույն ընթացակարգով:

Երկրորդ տարբերակով առաջադրված խնդրի լուծման ալգորիթմի բլոկ-սխեման բերված է նկար1-ում: Որևէ մասիվի ծնավորման, մուտքագրման և փոխանցման ալգորիթմը բաղկացած է հետևյալ քայլերից.

- 1–ին մակարդակի օբյեկտում ծնավորվում և մուտքագրվում է  $M_r$ , մասիվը,
- Ստացվում են  $M_r$ , մասիվի ֆրագմենտները համակարգի բոլոր և հատ օբյեկտների համար՝  $M_r^{(1)}, M_r^{(2)} \dots M_r^{(i)} \dots M_r^{(k)}$ ,
- Ստացված ֆրագմենտները ուղարկվում են համապատասխան օբյեկտներին,
- Օբյեկտները ստացված ֆրագմենտը ֆիքսում են և 1–ին մակարդակի օբյեկտին ուղարկում են հաղորդագրություն հերթական ֆրագմենտը ստանալու վերաբերյալ,
- 5–ին կետերը կատարվում են համակարգի ելման ինֆորմացիայի բոլոր մասիվների համար:

Մասիվների կենտրոնացված մուտքագրման և տարածման ծշտությունը ստուգվում է ենթակա օբյեկտներից ստացված գեկույց-հաստատումներով, որոնց մեջ պետք է նշված լինի տվյալ օբյեկտում ստացված ֆրագմենտի «ստուգիչ գումարը»: Ստուգիչ գումարը հաղորդագրությանը կցված մեկ կամ մի քանի բայց երկարության կող է, որը ստացվում է տվյալ հաղորդագրության վրա կիրառելով որևէ հակադարձելի գործողություն, օրինակ՝ «գումար ըստ mod 2-ի»:

Նամակարգի ելման ինֆորմացիայով լցմելու գործընթացը կարելի է արագացնել նշված ընթացակարգով աշխատելով համակարգի ամենավերին օբյեկտի մի քանի աշխատանքային տեղերից՝ յուրաքանչյուրից ծնավորելով ու մուտքագրելով մասիվների առանձին խմբեր:



Նկար1. Ելման իմֆորմացիայի կենտրոնացված ծևավորման և մուտքագրման ալգորիթմի բլոկ-սխեման

Համակարգի կապուղիների ծանրաբեռնվածությունը փոքրացնելու համար նպատակահարմար է հավաքել ու կուտակել ենթակա օբյեկտների ելման նախվճերը ամբողջությամբ և միանգամից ուղարկել հասցեատերերին՝ յուրաքանչյուրին առաձին հարցումով:

Տարածքային հիերարխիկ համակարգի օբյեկտների ելման ինֆորմացիայի վերը նշված եղանակով ծևավորման ու մուտքագրման ընթացակարգն ապահովում է.

- ինֆորմացիոն համապատասխանություն հիերարխիայի նույն ճյուղին պատկանող օբյեկտների միջև,
- համակարգի ելման ինֆորմացիայի ծևավորում և մուքագրում՝ ելեկտրով համակարգի ամենավերին օբյեկտում գտնվող հաստատված սկզբնական փաստաթրից,
- ծևավորված նախվճերի մեջ սխալների ուղղման և փոփոխությունների կատարման կենտրոնացված իրականացման հնարավորություն,
- համակարգի ելման ինֆորմացիայի ծևավորման և մուտքագրման համեմատաբար փոքր ժամանակ և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ նկարագրված մեթոդիկան շատ հարմար է նաև համակարգի ծրագրային ապահովման մեջ հայտնաբերված սխալների հետքերը մաքրելու, ծրագրային ապահովումը նոր համակարգային և կիրառական փաթեթներով արդիականացնելու և շատ այլ խնդիրներ լուծելու համար:

**Բանալի բառեր – ինֆորմացիոն օբյեկտ, տվյալների ծևայնացում, ելման ինֆորմացիա, ավտոմատացված իմֆորմացիոն համակարգ, կենտրոնացված մուտքագրում**

#### Գրականություն

1. Մելիքյան Յ. Ա., Ավետիսյան Ռ. Ա., Մարկոսյան Ա. Ա. – «Կառավարման ավտոմատացված համակարգեր», ուսումնական ծեռնարկ, Եր., Պոլիտեխնիկ, 2008 թ.

**МЕТОДИКА ЦЕНТРАЛИЗОВАННОГО ВВОДА И КОРРЕКТИРОВКИ  
ИСХОДНЫХ ДАННЫХ ТЕРРИТОРИАЛЬНОЙ  
АВТОМАТИЗИРОВАННОЙ ИНФОРМАЦИОННОЙ СИСТЕМЫ**

**Г. А. МЕЛИКЯН**

*Кандидат технических наук, доцент*

Работа посвящена разработке методики централизованного формирования и ввода исходной информации на объектах территориальной иерархической автоматизированной информационной системы.

**METHODOLOGY OF CENTRALIZED INPUT AND ADJUSTMENT OF  
SOURCE DATA OF TERRITORIAL AUTOMATIZED INFORMATION SYSTEM**

**H. A. MELIQYAN**

*Candidate of Technical Sciences, Assistant Professor*

This work is devoted to the elaboration of methodology of centralized formation and input of source information upon the objects of territorial hiarazchical automatized information system.